ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Իրավապահ մարմինների և ոստիկանության տարբեր ստորաբաժանումների հարգելի ներկայացուցիչներ, շնորհավորում եմ բոլորիդ՝ մասնագիտական տոնի կապակցությամբ:

Անուրանալի է ձեր դերն ու ներդրումը հասարակական կարգի պահպանման և հանցավորության դեմ պայքարում:

Լիահույս եմ, որ տարիների ընթացքում ունենալու ենք այնպիսի իրավապահ համակարգ, որը քաղաքացիներին ներշնչելու է ոչ թե վախի, այլ ապահովության և անվտանգության զգացողություն:

Հասարակության առջև իր պարտականությունները կատարելիս ոստիկանը պետք է լինի բարոյական լավագույն որակների կրողը և օրինակը՝ արժանապատիվ քաղաքացու:

Հարգարժա՛ն ոստիկաններ, կրկին շնորհավորում եմ բոլորիդ և մաղթում բարեկեցություն ձեր ընտանիքներում և ողջախոհություն՝ ծառայության մեջ:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան